ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1544-22 առ "11" 07 2022թ.

«ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ տնօրեն
պրն Ս. Զաքարյանին

[Ծանուցում ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-14/22-01/087 պայմանագիրը
միակողմանի լուծելու վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Զաքարյան,

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «հակահրդեհային ազդանշանային համակարգի սարքեր և պահեստամասեր» ապրանքների ձեռքբերման նպատակով 2022թ. փետրվարի 28-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-14/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2022թ. ապրիլի 7-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-14/22-01/087 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ 3247860 (երեք միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Համաձայն պայմանագրի հավելված № 1-ի՝ մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 40 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված ապրանքները «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7 կետի համաձայն, միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2022թ. ապրիլի 7-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-14/22-01/087 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրենի տեղակալ
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս. Հ. Մաթևոսյան**

Կազմեց՝
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ՝
Գ. Մարկոսյան
Հեռ. 010-28-29-60